

**ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ**

**Միմոնյան Հայարփի Մանթաշի**

**Նոր հետերոցիկլիկ տեղակալված ոչ սպիտակուցային  
α-ամինաթթուների կենսամիմնութիւն ասիմետրիկ սինթեզ**

**Բ.00.10 - «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ  
քիմիական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան – 2013**

---

**НПЦ «АРМБИОТЕХНОЛОГИЯ» НАН РА ГНКО**

**Симонян Айарпи Манташовна**

**Биомиметический асимметрический синтез новых гетероциклически  
замещенных небелковых α-аминокислот**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени  
кандидата химических наук по специальности  
02.00.10 – «Биоорганическая химия»**

**Երևան – 2013**

Աստենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական դեկանավար՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր  
Ա. Ս. Սաղյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ թրակից անդամ, պրոֆեսոր  
Գ. Հ. Դանազովյան  
քիմիական գիտությունների թեկնածու  
Ա.Ա. Դարայան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 14<sup>00</sup> – ին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի Կենսատեխնոլոգիայի 018 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0056, ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան փողոց, 14, հեռ/ֆաքս (374 10) 65 41 83:  
Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
կենսարանական գիտությունների թեկնածու

Գ.Ե. Ավետիսովա

Тема диссертации утверждена на заседании ученого совета химического факультета ЕГУ.

Научный руководитель:

академик НАН РА, профессор  
А.С. Сагиян

Официальные оппоненты:

член-корреспондент НАН РА, профессор  
Г.Г. Данагулян  
кандидат химических наук  
С.А. Дадаян

Ведущая организация: Национальный аграрный университет Армении  
Защита диссертации состоится «25» октября 2013г. в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 018 Биотехнологии ВАК РА при НПЦ «Армбиотехнология» НАН РА.

Адрес: 0056, РА, г. Ереван, ул. Гюргян, 14, тел/факс (374 10) 65 41 83.  
С диссертацией можно ознакомиться в библиотеке НПЦ «Армбиотехнология» НАН РА.

Автореферат разослан «25» сентября 2013 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат биологических наук

Г.Е. Аветисова

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

**Խնդիրի արդիականությունը:** Կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը համարվում է բնական մետարոխտների քրիալային նմանակների սինթեզի արդյունավետ մոտեցումներից մեկը: Այդպիսի միացությունների շարքին են դասվում նաև ոչ սպիտակուցային ամինաքրուները, որոնք որպես ֆերմենտների ոչ դարձելի ինիդրիտորներ առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացրել դեղագործության, բժշկագիտության, մանրէաբանության և գիտության ու տեխնիկայի այլ բնագավառներում: Բացահայտված է, որ պեպտիդային բնույթի դեղապատրաստուկի բաղադրության մեջ սպիտակուցային ամինաքրվի փոխարինումը նրա ոչ սպիտակուցային նմանակով բերում է դեղի ազդեցության խստ պրոլոնգացմանը, և հետևաբար՝ արդյունավետության մեծացմանը: Այսօր հայտնի են բազմաթիվ հակարացկեղային, հակավիրուսային, հակահիպերտենզիվային և այլ դեղապատրաստուկներ, որոնց ակտիվ ազլիկոնը համարվում է ոչ սպիտակուցային ամինաքրուների ներդրումը կնսաբանական և կենսաքիմիական հետազոտություններում բերել է նոր շարքի կենսապատրաստուկների հայտնաբերմանը:

Սուպել հետաքրքրություն են առաջացրել կողքային ռադիկալում տարբեր կառուցվածքի հետերոցիկիկ տեղակալիներ պարունակող ոչ սպիտակուցային ամինաքրուները, որոնք օտարածին են օրգանիզմի համար ինչպես կառուցվածքով, այնպես էլ հետերոաստոմների բնույթով:

Անիրամեշտ է նշել, որ գրեթե բոլոր բնագավառներում ամինաքրուները պիտանի են կիրառության համար միայն օպտիկական մաքոր ստերեոիզոմերների տեսքով: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դեղաբանորեն ակտիվ քրիալային պատրաստուկի օպտիկական անտիպոդը ցուցաբերում է բացասական դեղաբանական ազդեցություն: Հետևաբար, նման կարգի միացությունների արտադրության համար անիրամեշտ է մշակել այնպիսի մերոդեր, որոնք կապահովեն վերջնական արգասիքների բարձր օպտիկական մաքրությունը: Եթե սպիտակուցային ամինաքրուների արտադրության համար աշխարհում օգտագործվում է մանրէաբանական կամ ֆերմենտային սինթեզի մերոդերը, ապա ոչ սպիտակուցային ամինաքրուների ստացման համար՝ վերջիններիս ոչ սպիտակուցային կառուցվածքի պատճառով, զարգացվում է ասիմետրիկ սինթեզի ուղղությունը:

Հետևաբար, ոչ սպիտակուցային α-ամիանքրուների՝ ներառյալ կողքային ռադիկալում տարբեր բնույթի հետերոցիկեր պարունակող էնանտիոմերապես հարստացված ալանինի, ցիստենին և ամինակարագարքվի նմանակների ասիմետրիկ սինթեզի արդյունավետ մեթոդների մշակումը կարևոր և հրատաս խնդիր է:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Օգտագործելով նախակինում մշակված դեկիդրոամինաքրուների (դեկիդրոալանինի և դեկիդրոամինակարագարքվի) և պրոլինի հենքի վրա կառուցված քրիալային օժանդակ ռեագենտների Ծիֆի հիմքերի  $Ni^{II}$  կոմպլեքսները՝ որպես պիրիդոքսալֆուֆատ-կախյալ ֆերմենտների մոդելային համակարգեր և դրանց ամինաքրվային մնացորդի  $C=C$  կապին Սիբայելի նուկլեոֆիլ միացման ռեակցիաները, ատենախտսական աշխատանքում նպատակ է դրվել մշակել գրականության մեջ չնկարագրված մի շարք նոր օպտիկական ակտիվ հետերոցիկի տեղակալված (*S*)- և (*R*)-α-ամինաքրուների կենսամիմետրիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդներ:

Նպատակին հասնելու համար նախատեսվում էր լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

1. սինթեզել հետ դեհիդրոամինաթրուների (դեհիդրօլանինի և դեհիդրօամինակարագաթրվի) և (S)- ու (R)-2-N-(N'-բենզիլպրոյլի)ամինաթենզաֆենոն քիրալային օժանդակ ռեագենտի և նրա մոդիֆիկացված նմանակի՝ (S)- ու (R)-2-N-(N'-2-քլորքենզիլպրոյլ)ամինաթենզաֆենոնի Ծփի հիմքերի հետ Ni<sup>II</sup> իոնի առաջարկած հարք-քառակուսային կոմպլեքսները,
2. հետազոտել դեհիդրօալանինի քիրալային կոմպլեքսներին 3 և 4 դիրքերում այլիքատիկ և արոմատիկ տեղակալված 1,2,4-տրիազոլների նուկլեոֆիլ միացման ռեակցիաները, մշակել համապատասխան հետերոցիկլիկ տեղակալված (R)- և (S)-ամինաթրուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի մեթոդներ,
3. հետազոտել դեհիդրօալանինի քիրալային կոմպլեքսներին լրացուցիչ ֆուրանային, բիոֆենային կամ այլ հետերոցիկլիկ օդակներով համակցված 1,2,4-տրիազոլների նուկլեոֆիլ միացման ռեակցիաները, մշակել կոռքային ռադիկալում երկու համակցված հետերոցիկլիկ օդակներով (R)- և (S)-ամինաթրուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդներ,
4. հետազոտել դեհիդրօալանինի քիրալային կոմպլեքսներին մորֆոլինային և պիրիդինային օդակներով համակցված նուկլեոֆիլների միացման ասիմետրիկ ռեակցիաները, մշակել համապատասխան հետերոցիկլիկ տեղակալված (R)- և (S)-ամինաթրուների, ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի մեթոդներ,
5. հետազոտել դեհիդրօալանինի քիրալային կոմպլեքսներին պիրիդինային նուկլեոֆիլ միացման ասիմետրիկ ռեակցիաները, մշակել կոռքային ռադիկալում պիրիմիդինային տեղակալիչ պարունակող (S)- և (R)-ամինաթրուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի մեթոդներ,
6. հետազոտել դեհիդրօամինակարագաթրվի քիրալային կոմպլեքսներին բիոֆենային օդակի հետ համակցված տրիազոլային շարքի նուկլեոֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաները, մշակել թուրքում բիոֆենային տեղակալիչ պարունակող (2R,3R)- և (2S,3S)-*allo*-α-ամինակարագաթրվի բարձրասեղմական ասիմետրիկ ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի մեթոդներ,

**Աշխատանքի գիտական նորույթ:** Օգուագործելով թուրքակալված ա-ամինաթրուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի համար նախկինում մշակված մերոդիոգիան, մշակվել են նոր հետերոցիկլիկ տեղակալված օպտիկալակետ ակտիվ ոչ սպիտակուցային (S)- և (R)-ա-ամինաթրուների կոռքային ռադիկալում տրիազոլային, ֆուրանային, բիոֆենային, մորֆոլինային, պիրիդինային, պիրիմիդինային օդակներ պարունակող ալանինի, ցիտոսինի և ամինակարագաթրվի նմանակեների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի արդյունակետ մեթոդներ (de 80-96%): Սինթեզել են գրականության մեջ շնկարագրված 44 էնանտիոներակետ մաքոր (ee > 99%) հետերոցիկլիկ տեղակալված (S)- և (R)-ա-ամինաթրուներ:

**Աշխատանքի կիրառական նշանակություն:** Մշակված կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի մեթոդները հնարավորություն են տալիս միևնույն ելային դեհիդրօամինաթրվային սինթոնի կիրառմամբ բարձր էնանտիոներային մաքրությամբ ստանալ լայն սպեկտրի օպտիկալակետ ակտիվ հետերոցիկլիկ տեղակալված α-ամինաթրուներ: Ելային քիրալային օժանդակ ռեազենտները յուրաքանչյուր սինթեզից հետո վերակազմնվում են ելային օպտիկական ակտիվության ամբողջական պահպանմամբ, ինչը հնարավորություն է տալիս

Արանց բազմակի անգամ օգտագործել ամինաքրուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում:

Սույն աշխատանքում սինթեզվել են 44 նոր օպտիկապես ակտիվ հետերոցիկլիկ տեղակալված ոչ սպիտակուցային (*S*)- և (*R*)-ա-ամինաքրուներ (ալանինի, ցիստենի, ամինակարագարքի ածանցյալներ), որոնք ապագայում կարող են կիրառություն գտնել ֆիզիոդիֆապես ակտիվ պեպտիդների և այլ դեղապատրաստուկների արտադրություններում:

Մոտ ապագայում մշակված մեթոդները կներդրվեն ՀՀ ԳԱԱ «Հայկենաստեխնոլոգիա» ԳԱԿ-ի փորձարարական կայանում ստեղծված օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաքրուների փորբաժակալ արտադրական գծում և սինթեզված նոր հետերոցիկլիկ տեղակալված ա-ամինաքրուները հաջորդությամբ կապրանքայնացվեն միջազգային շուկայում:

#### **Պաշտպանության ներկայացված դրույթները:**

- դեհիդրոպամինաքրվային նորիֆիկացված և չմոդիֆիկացված քիրալային կոմպլեքսներին տարբեր կառուցվածքի հետերոցիկլիկ ռեագենտների նույնականացման ռեակցիաների հետագործում:

- գրականության մեջ չնկարագրված նոր հետերոցիկլիկ տեղակալված օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային (*S*)- և (*R*)-ա-ամինաքրուների կորուային ռադիկալում տրիազոլային, ֆուրանային, թիոֆենային, մորֆոլինային, պիրիդինային, պիրիդինային օրակներ պարունակող ալանիների, ցիստենիների և ամինակարագարքի կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ:

**Աշխատանքի կազմ գիտական ծրագրերի և թեմաների հետ:** Աշխատանք իրականացվել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) **A-1677** (2008-11թ.), հայ-գերմանական VolkswagenStiftung ID Az 86 223 (2012-14թ.) դրամաշնորհների, ինչպես նաև ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի բազային և գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում:

**Հեղինակի անձնական ներդրում:** Հեղինակի անձնական ներդրումը ներառում է աշխատանքի հետ առնչվող գիտական գրականության վերլուծությունն ու ընդհանրացումը, հետազոտության հիմնական փորձարարական խնդիրների իրականացումն ու ամփոփումը, տպագրվող գիտական հոդվածների նախապատրաստումը և ատենախոսության կազմումը: Խնդրի դրվագն ու արդյունքների քննարկումն իրականացվել է գիտական դեկավար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ա.Ս.Սալյանի ղեկավարությամբ:

**Աշխատանքի քննարկումը և տպագրությունները:** Ատենախոսության արդյունքները շարադրված են 5 գիտական հոդվածներում և 4 թեզիսում և ներկայացվել են ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնի նիստերում և «State of the Art Biotechnology in Armenia & ISTC Contribution», Tsakhadzor, 2008, «Успехи синтеза и комплекскоординации», Москва, 2012, «Second International Conference of Young Chemists», Tbilisi, 2012, 6th International conference «Chemistry of Nitrogen Containing Heterocycles», Kharkiv, 2012 միջազգային գիտաժողովներում:

**Աշխատանքի իրականացման վայրը:** Աշխատանք իրականացվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեղագործական քիմիայի ամբիոնում:

**Աշխատանքի ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է նախարանից և չորս գլուխներից (գրական ակնարկ, խնդրի դրվագը և հետազոտման օբյեկտի ընտրություն, արդյունքների քննարկում, փորձնական մաս), եղակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 141 էջի

վրա, բերված են 38 սխեմա, 9 նկար և 9 աղյուսակ: Գրականության ցանկն ընդգրկում է 144 գիտական տպագիր հոդվածներ:

**ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.** Նվիրված է գրականության ամփոփմանը և նկարագրված են ոչ սպիտակուցային ամինաթքուների կիրառման ոլորտները, օրգանիզմում պիրիդոքսալյային ֆերմենտների ազդեցությամբ ամինաթքուների մետարոլիկ փոխարկուները և նրանց մոդելավորումը: Առանձին բաժին նվիրված է ոչ սպիտակուցային ամինաթքուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզի նկարագրությանը: Մանրամասն ներկայացված է ասիմետրիկ սինթեզի օրինաչափությունները, ամինաթքուների ստացման կատալիտիկ և ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի մերողները:

## ԽԵՆՔԻ ԴՐԱՎԱԾՔ ԵՎ ՀԵՏԱԶՈՒՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հետազոտության հիմնական առարկա են հանդիսացել պիրիդոքսալֆոսֆատ (ՊՖ) ֆերմենտների արդյունավետ մոդելային համակարգերի հետազոտումը (*S*- և (*R*)-բացարձակ կոնֆիգուրացիայով ամինաթքուների, ներառյալ կողքային ռադիկալում տարրեր բնույրի հետերոցիկլիկ տեղակալիչներ պարունակող էնանտիոներացվես հարստացված ալանինի, ցիստենին և ամինակարագարքվի նմանակների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Որպես ՊՖ-ֆերմենտների մոդելային համակարգեր ընտրվել են Ni<sup>II</sup> իոնի հարք-քառակուսային կոմպլեքսները՝ կազմված դեկիդրոամինաթքուների և (*S*- ու (*R*)-պրոլինի հենքի վրա կառուցված բիրալյային օժանդակ ռեագենտների Շիֆի հիմքերից:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ.



### 1. Կողքային ռադիկալում այիֆատիկ և արոմատիկ տեղակալիչներով 1,2,4-տրիազոլային օլոկ պարունակող α-ամինաթքուների կնճսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ:

Հետազոտվել է Ni<sup>II</sup> իոնի հետ դեկիդրոալանինի և (*S*)-BPB բիրալյային օժանդակ ռեագենտի և նրա մոդելֆիկացված (*S*)-2-CBPB նմանակի Շիֆի հիմքերի առաջացրած հարք-քառակուսային կոմպլեքսների (1,2) C=C կապին 3-րդ և 4-րդ դիրքերում տարրեր կառուցվածքի այիֆատիկ և արոմատիկ տեղակալիչներով 5-թիօրոտ-1,2,4-տրիազոլների (3-12) ասիմետրիկ միացման ռեակցիաները՝ հիմնային կատալիզի պայմաններում:

Նուկleinֆիլ միացման ռեակցիաները հետազոտվել են տարրեր միջավայրերում CH<sub>3</sub>CN/K<sub>2</sub>CO<sub>3</sub>, CH<sub>3</sub>CN/KOH, DMF/NaOH, THF/NaOH, ինչպես տաքացման, այնպես էլ սենյակային շերմաստիճանի պայմաններում: Ռեակցիաները առավել քանակական ելքերով և բարձր ստերեոսելեկտիվությամբ են ընթանում ացետոնի խորիլ միջավայրում K<sub>2</sub>CO<sub>3</sub>-ի առկայությամբ: Միացման ռեակցիաների ընթացքին հետևել ենք ՆՇԸ մերողով [SiO<sub>2</sub>, CHCl<sub>3</sub>:CH<sub>3</sub>COCH<sub>3</sub> (3:1) (Սխեմա 1):


Դեկիդրոալանինի կոմպլեքսներին նուկleinֆիլների միացման արդյունքում առաջանում է հետերոցիկլիկ տեղակալված ամինաթքուների դիաստերեոներ կոմպլեքսների խառնուրդ (S,S)-դիաստերեոնների (13-32) բարձր ավելցուկով, որոնք մաքրվել են խառնուրդից բիրեղային քրոմատոգրաֆիայի մեթոլով [SiO<sub>2</sub>, 20x20 սմ, CHCl<sub>3</sub>:CH<sub>3</sub>COCH<sub>3</sub> (3:1)] և հետազոտվել ու հաստատվել են նրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

## Միսեմա 1



Նույկենֆիլ միացման ռեակցիաները համարվում են թերմոդինամիկորեն վերահսկվող ալյումիներ և միջանկյալ sp<sup>2</sup> հարք-կարբամիոնային կիճակով թերմոդինամիկորեն քիչ կայուն (S,R)-դիաստերեոիզոմերները աստիճանաբար տրամադրմացվում են ավելի կայուն (S,S)-դիաստերեոիզոմերների՝ շնորհիվ նրանց ազատ էներգիաների զգալի տարբերության: (Նկար 1):

(R)-պացարάսկ կոմմիդուրացիայով ամինաթրու պարունակող (S,R)-դիաստերեոներ կոմպլեքսների ցածր թերմոդինամիկական կայունությունը պայմանավորված է ծավալուն տրիազոլային օռակ պարունակող կոռպարային ռատիկալի տարածական դիբրոք: Այն ուղղված է դեպի N-թերմիկորդինային մնացորդի թերմիկային խումբ, ինչի արդյունքում այդ ծավալուն խմբերի միջև առկա վանոնդական չկապող փոխազդեցուրյան շնորհիվ մեծանում է համակարգի ազատ էներգիան, ինչը և բերում է այդ դիաստերեոիզոմերի անկայունացմանը: Իսկ (S,S)-դիաստերեոներ կոմպլեքսների մակրոկառուցածքում ամինաթրվային մնացորդի ծավալուն հետերոցիկլիկ տեղակալիքը բաշխված է N-թերմիկորդինի մնացորդի թերմիկային խմբի հակառակ կողմում, և նրանց միջև չկապող փոխազդեցուրյունը՝ հետևաբար նաև համակարգի ազատ էներգիան, նվազագույն է:



$$\Delta G > 4 \text{ կլայ/մմ}$$

**Նկար 1.** Միացման արգասիք կոմպլեքսների դիաստերեոիզոմերների միջև թերմոդինամիկական հավասարակշռությունը

Միացման ռեակցիաների ստերեոսեկլիտիվուրյունը (ee) գնահատվել է քիրալային ԲԱՀՀ (քարձ արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆիա) անալիզի մեթոդով: Դա համար արգասիք կոմպլեքսների դիաստերեոներային խառնուրդը մինչև քրոմատոգրաֆացնելը) ենթարկվել է աղաքրվային քայլայման և, որոշվել է նպատակային ամինաքրվի էնանտիոմետրների հարաբերակցությունը քիրալային ԲԱՀՀ անալիզի մեթոդով: (Աղյուսակ 1):

### Աղյուսակ 1

Ներկայացնենք քիրալային կոմպլեքսներին (1,2) այիֆատիկ և արոմատիկ տեղակալված թիօրոտիփազոների (3-12) ասինտրիկ միացման արդյունքները՝  $CH_3CN/K_2CO_3$  միջավայրում,  $25^{\circ}C$  կամ  $50^{\circ}C$  պարմանմերում:

N	Ելային կոմպլեքս	Նուկլեօֆիլ ագենտ	Արգասիք կոմպլեքս	Ժամանակ (րոպե)	$(S,S)/(S,R)$ (%) <sup>a</sup>	Երա (%) <sup>**</sup>
1.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	3	13	300	95,06/4,94	60
2.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	14	420	98,02/1,98	64
3.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	4	15	120	93,76/6,24	67
4.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	16	150	94,64/5,36	65
5.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	5	17	60	96,03/3,97	60
6.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	18	110	98,11/1,89	62
7.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	6	19	180	96,01/3,99	72
8.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	20	280	98,06/1,94	70
9.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	7	21	120	93,91/6,09	65
10.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	22	150	95,50/4,50	71
11.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	8	23	240	92,02/7,98	78
12.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	24	320	95,25/4,75	71
13.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	9	25	120	89,95/10,05	68
14.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	26	150	90,05/9,95	70
15.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	10	2	150	94,15/5,85	66
16.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	28	180	96,81/3,19	75
17.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	11	29	150	89,99/10,01	71
18.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	30	200	91,15/8,85	73
19.	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	12	31	90	96,03/3,97	68
20.	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-/-	32	180	98,08/1,92	70

\* - աղաքամիք կոմպլեքսների դիաստերեոների հարաբերությունը բառ քիազային ԲԱՀՀ անալիզի տվյալների,


\*\*- քիազաման եղբ միացման փուլում (դիաստերեոների կոմպլեքսների խառնուրդի համար)

Խնայես հետևում է այյուսակ 1-ում բերված տվյալներից, դեկտրուալանինի շմորիֆիկացված 1 կոմպլեքսի համեմատ, մորիֆիկացված 2 կոմպլեքսին հետերոցիկլիկ նուկլեօֆիլների ասիմետրիկ միացման ռեակցիաներում նկատվում է սինթեզի ստերեոսեկլուսիվուրյան աճ: Դա կարելի է բացատրել Cl-տեղակալիչի ներմուծման արդյունքում կոնյուլերսի մակրոլապուցվածքում ինդուցված ներմուծեկուլային տարածական փոփոխություններով: Խնայես ցույց է տրվել նախախնում ռենտգենկառուցվածքային անալիզի մեթոդով նմանատիպ մորիֆիկացված ալանինի կոմպլեքսների օրինակի վրա, N-բենզիլարուինի մնացորդի ֆենիլային օղակի 2-րդ դիրք ներմուծված քլոր-տեղակալիչի ազդեցությամբ փոփոխվում է N-բենզիլային խնդի դիրքը մետառի իոնի կոորդինացիոն դաշտում: Հավանաբար շնորհիկ Cl-տեղակալիչի և մետառի իոնի միջև առկա ձգողական փոխազդեցության, N-բենզիլային խումբը չնշին տեղաշարժվում է դեսի ամինաքրվային մնացորդը, ինչը կտրուկ նեղացնում է այն խոռոշը, որտեղ պետք է ներդրվի ծավալուն հետերոցիկլիկ նուկլեօֆիլ ազենտը դեկտրուալանինի մնացորդին միանալու համար: Դա մի կողմից կարող է բերել այդ

Առյան ուղղությամբ միացման ռեակցիաների կինետիկական արագության ամենա, հետևաբար նաև՝ ասիմետրիկ ռեակցիաների տևողության մեծացման, իսկ մյուս կողմից՝ միացման արգասիք կոմպլեքսների մինորային (*S,R*)-դիաստերեոիզոմերների էլ ավելի ապակայունացման, հետևաբար նաև՝ հիմնական (*S,S*)-դիաստերեոիզոմերների սինթեզի դիաստերեոմերային ավելցուկի, ինչը և նկատվում է սույն աշխատանքում (տես աղյուսակ 1):

Նպատակային ամինաքրուների անջատման համար աղաքրվային քայրայման են ենթարկվել մոդիֆիկացված դեհիդրոալանինի կոմպլեքսին (2) նուկլեօֆիլների միացման արդյունքում առաջացած հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսները (14,16,18,20,22,24,26,28,30,32): Աղաքրվային հիդրոիզոատներից ֆիլտրվել է ելային (*S*)-2-CBPB x HCl քրիտալյին օժանդակ ռեագենտը և լուծույթի հետագա իոնափոխանակային աղաքրկման և նպատակային ամինաքրուների ջրային երանուից բյուրեղացման ճանապարհով անջատվել են գրականության մեջ չնկարագրված (*S*-օ-ալանինի նոր  $\beta$ -հետերոցիկլիկ տեղակալված ածանցյալները (33-42): (Սխեմա 2):

Սխեմա 2



Սինթեզված ամինաքրու 42-ը օգտագործվել է պեպտիդային սինթեզում, ինչպես նաև ուսումնասիրվել է նրա ազդեցությունը պրոտեինաց Կ ֆերմենտի ակտիվության վրա: Փորձերը ցույց են տվել, որ այն ցուցաբերում է զգալի ինիդրացնող ազդեցություն:


## 2. Կողային ռադիկալում այլ հետերոցիկլիկ օդակի հետ համակցված 1,2,4-արիազոլային տեղակալիչ պարունակող α-ամինաքրուների կենսամիմնայիկ ասիմետրիկ սինթեզը:

Դեհիդրոալանինի մոդիֆիկացված և չմոդիֆիկացված կոմպլեքսները հետազոտվել են երկու հետերոցիկլիկ օդակ պարունակող նուկլեոֆիլ ազենտների՝ մասնավորապես ֆուրան, բիոֆեն, պիրիդին տեղակալիչներ պարունակող տրիազոլների ասիմետրիկ միացման ռեակցիաներում: (Սխեմա 3): Այս

ռեակցիաները նույնպես արդյունավետ են ընթանում ացետոնի տրիխիլ միջավայրում պոտաշի մերկայությամբ՝ մինչև  $40\text{--}45^{\circ}\text{C}$  տաքացման պայմաններում:

Դեինդուալանինի քիրալային կոմպլեքսներին համակցված հետերոցիկլիկ օդակներով նույնագույն ասիմետրիկ միացման արդյունքում նույնպես առաջանում է (*S,S*)- և (*S,R*)-դիաստերեոմեր կոմպլեքսների խառնորդ՝ (*S*)-ամինաքրու պարունակող (*S,S*)-դիաստերեոիզոմերների բարձր թերուունամիկական ավելցուկով ( $de \sim 78\text{--}98\%$ ): Հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսները (**51-66**) անջատվել են ռեակցիոն խառնորդից սիլիկամեթիլ վրա քրոմատոգրաֆացմամբ [ $\text{SiO}_2$ ,  $20\times20$  սմ,  $\text{CHCl}_3:\text{CH}_3\text{COCH}_3$  (3:1)] և հետազոտվել ու պարզաբանվել է նրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով:

### Սխեմա 3



Ասիմետրիկ միացման ռեակցիաների արդյունքները բերված են արյուսակ 2-ում:

Ինչպես ցոյց է տալիս փորձնական տվյալների վերլուծությունը, այստեղ նույնպես նկատվում է սինթեզի ստերեոսելեկտիվության աճ չնոդիֆիկացված BPB քիրալային օժանդակ ռեագենտից կազմված կոմպլեքսներից մոդիֆիկացված 2-CBPB քիրալային ռեագենտի կոմպլեքսներին անցնելու դեպքում: Ինչպես և սպավում էր, միաժամանակ նկատվում է ասիմետրիկ ռեակցիայի կիսետիկական արագության անկում, հետևաբար նաև՝ սինթեզի ընդհանուր տևողության երկարաձգում (հնարավոր բացատրությունը բերված է նախորդ բաժնում):

Դեմիուրալանինի կոմպլեքսներին այլ հետերոցիլիիկ օղակների հետ համակցված 5-թիօրոս-1,2,4-տիազոլների ասիմետրիկ միացման արդյունքները

N	Ելային կոմպլեքս	Նուկլեօֆիլ ազինոտ	Արզասիք կոմպլեքս	Ժամանակ (րոպե)	$(S,S)/(S,R)$ (%)	Ելք (%)**
1	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	43	51	180	98,60/1,40	62
2	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	52	210	98,75/1,25	70
3	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	44	53	200	98,12/1,88	65
4	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	54	240	99,1/0,89	72
5	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	45	55	80	90,50/9,50	71
6	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	56	180	98,50/1,50	73
7	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	46	57	60	96,01/3,99	64
8	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	58	90	98,06/1,94	69
9	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	47	59	110	90,20/9,80	65
10	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	60	140	96,62/3,38	70
11	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	48	61	180	89,38/10,62	70
12	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	62	200	91,77/8,23	63
13	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	49	63	100	97,05/2,95	68
14	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	64	120	98,05/1,95	75
15	Ni <sup>II</sup> -(S)-BPB-Δ-Ala (1)	50	65	90	92,04/7,96	60
16	Ni <sup>II</sup> -(S)-2-CBPB-Δ-Ala (2)	-//-	66	120	94,04/5,96	65

\* - արգասիք կոմպլեքսների դիաստերոիդոներների հարաբերությունը բառ դիրապային ԲԱՀՀ անալիզի տվյալների

\*\* - դիմացան նոր միացման փուլում (դիաստերոների կոմպլեքսների հասնակությունը)

Նուկլեօֆիլ միացման ռեակցիաների արդյունքում առաջացած մոդիֆիկացված հիմնական դիաստերեոներ կոմպլեքսների աղարթվային քայլայման հիդրոխղատներից ստանդարտ մեթոդով անշատվել են կողքային շղրայում երկու համակցված հետերոցիլիկ օղակ պարունակող ա-ամինաթրուները (67-74):(Ախտամա 4):

Սույն բաժնում միմքեզված 67, 68, 69, 73 և 74 ամինանարթրուները այնուհետև հաջողվել է ներդնել պեպտիդների կառուցվածքի մեջ: Մինթեզվել են N-Form և N-BOC պաշտպանված դի- և տրի-պեպտիդներ նշված ամինաթրուների պարունակությամբ և հետազոտվել է դրանց ազդեցությունը տրիպսին և պրոտեինազ K ֆերմենտների ակտիվության վրա: Արդյունքում արձանագրվել է, որ պրոտեինազ K ֆերմենտի ակտիվության վրա նշված ամինաթրուները ցուցաբերում են արգելակող ազդեցություն, իսկ նրանցից կազմված պեպտիդները՝ ակտիվացնող ազդեցություն: Իսկ տրիպսին ֆերմենտի վրա ինչպես ամինաթրուները, այնպես էլ նրանցից կազմված պեպտիդները ցուցաբերում են միայն ակտիվացնող հատկություն:


### 3. Կողքային ռադիկալում համակցված հետերոցիլիկ մոքայինային և պիրիդինային օղակներ պարունակող S-տեղակազմական (R)-ցիստերների ասիմետրիկ սինթեզը:

Աշխատանքի հաջորդ փուլում իրականացվել է դեկիդրոալանինի շմողիֆիկացված կոմպլեքսի (1) կրկնակի C=C կապին մորֆոլինային և պիրիդինային օղակներ պարունակող հետերոցիլիկ նուկլեօֆիլների (75-78)

ասիմետրիկ միացման ռեակցիաները: Արդյունքում նշակել են համապատասխան հետքողիկիկ S-տեղակալված (*R*)-ցիստենիների ասիմետրիկ սինթեզի մեթոդներ:

Նուկլեօֆիլ միացման ռեակցիաները հետազոտվել են  $\text{CH}_3\text{CN}/\text{NaOH}$ ,  $\text{CH}_3\text{CN}/\text{Et}_3\text{N}$  և  $\text{CH}_3\text{CN}/\text{K}_2\text{CO}_3$  միջավայրերում սենյակային ջերմաստիճանի և մինչև  $45\text{--}50^\circ\text{C}$  տաքացման պայմաններում: (Սխեմա 4): Լավագույն արդյունքներ են արձանագրվել  $\text{CH}_3\text{CN}/\text{K}_2\text{CO}_3$  միջավայրում սենյակային ջերմաստիճանի պայմաններում: Նուկլեօֆիլային միացման ռեակցիաների ընթացքի հետևել ենք ՆՇՔ մեթոդով [ $\text{SiO}_2$ ,  $\text{CH}_3\text{COOC}_2\text{H}_5:\text{CHCl}_3$  (5:1)] ըստ ելային 1 կոմպլեքսի հետքերի անհետացման և միացման արգասիք կոմպլեքսների (79-82) (*S,R*)- և (*S,S*)-դիաստերեոիզոմերների միջև հավասարակշռության հաստատման:

Սխեմա 4



Ինչպես և նախորդ դեպքերում, այստեղ նույնպես նուկլեօֆիլային միացման արդյունքում առաջանում են արգասիք կոմպլեքսների *L,L*- կամ (*S,R*)- և *L,D*- կամ (*S,S*)-դիաստերեոիզոմերների խառնուրդ՝ հետերոցիկլիկ S-տեղակալված (*R*)-ցիստենիներ պարունակող (*S,R*)-դիաստերեոիզոմների բարձր

դիաստերեոմերային ավելցուկով ( $dc \sim 82\text{-}90\%$ ) (*S*-տեղակալված ցիստեհնների դեպքում համաձայն Կան-Ինգոլդ-Պրելոնզի կանոնի, *L*-բացարձակ կոնֆիգուրացիան համապատասխանում է (*R*)-կոնֆիգուրացիային, իսկ *D*-ն (*S*)-կոնֆիգուրացիային):

Հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսի դիաստերեոմերային ավելցուկը ( $dc$ ) որոշվել է քիրալային  $\mu\text{U}\zeta\varphi$  անալիզի մեթոդով՝ դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի (մինչև քրոմատոգրաֆացումը) աղաքրվային հիդրոխազուից անջատված ամինաթթվային խառնուրդի էնանտիոմերային անալիզով: (Աղյուսակ 3):

### Աղյուսակ 3

**Նեիիդրոալմինի քիրալային կոմպլեքսին (1) մորֆոլինային և պիրիդինային հետերոցիկլերով համակցված մուլտիֆիլիների (75-78) ասիմետրիկ միացման արդյունքները**

№	Նուկլեօֆիլ ագենտ	Ժամանակ (րոպե)	Սիացման արգասիրներ		
			Հիմնական դիաստերեոմեր	$dc, \%$ *	Զիմնական ելք (%)**
1	<b>75</b>	10	<b>79</b>	88,03	78
2	<b>76</b>	40	<b>80</b>	86,08	81
3	<b>77</b>	20	<b>81</b>	82,12	62
4	<b>78</b>	15	<b>82</b>	90,03	71

\* -  $dc$  (միացման արգասիր կոմպլեքսների դիաստերեոմերների հարաբերությունը) ըստ քիրալային  $\mu\text{U}\zeta\varphi$  անալիզի տվյալների

\*\*- քիմիական երրորդ միացման փոլում (դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի):

Կողքային ռադիկալում մորֆոլինային և այլ խմբերով համակցված պիրիդինի հետերոցիկլիկ օնակներ պարունակող *S*-տեղակալված (*R*)-ցիստեհնները (83-86) անջատվում են հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսների (79-82) աղաքրվային հիդրոխազուներից ստանդարտ մեթոդներով, նրանց կառուցվածքը և բացարձակ կոնֆիգուրացիան հետազոտվել և պարզաբանվել է ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

**4. (*S*)-և (*R*)-թ-(6-ամին-1,3-դիմեթիլ-2,4-դիօքս-1,2,3,4-տետրահիդրոպայրինի-5-իլ)-աղաքրմաների ասիմետրիկ սիմբեզը:**

Առենախոսական աշխատանքի տույն բաժնում իրականացվել է 6-ամինո-1,3-դիմեթիլ-2,4-դիօքս-1,2,3,4-տետրահիդրոպայրիմիդինի (87) նուկլեօֆիլ միացման ռեակցիան դեկտրուալանինի քիրալային շնորհիկացված (1) և մոդիֆիկացված (2) կոմպլեքսներին: (Աղյուսակ 5):


Այս նուկլեօֆիլ միացման ռեակցիան ևս հեշտ և քանակական ելքերով է ընթանում ացետոնիտրիլի միջավայրում պոտաշի ներկայությամբ՝ մինչև  $50^{\circ}\text{C}$  տաքացման պայմաններում:

Ինչպես և սպասակում եր, միացման ռեակցիայի արդյունքում առաջանում է (*S,S*)- և (*S,R*)-դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդ՝ (*S*)-ամինաթթու պարունակող դիաստերեոմերի բարձր ավելցուկով: Միացման արգասիր կոմպլեքսների հիմնական (*S,S*-88,89 դիաստերեոմերները անջատվել են ռեակցիոն միջավայրից քրոմատոգրաֆացմամբ [ $\text{SiO}_2$ , 20x20 սմ,  $\text{CHCl}_3:\text{CH}_3\text{COCH}_3$  (2:1)] և նրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հետազոտվել և բացահայտվել է ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

Նպաստակային էնանտիոմերապես հարստացված հետերոցիկլիկ

տեղակալված  $\alpha$ -ամինաթթուն (90) անջատվել է արգասիք կոմպլեքսի դիաստերոմերային խառնուրդից ստանդարտ եղանակով:

### Միենա 5



Դրա համար խառնուրդը մերթանով միջավայրում տարացման պայմաններում քայլայվել է 2N HCl-ի ջրային լուծույթով, ելային քիրալային օժանդակ ռեագենտները անջատվել են հիդրոքլորիդի տեսրով ֆիլտրմամբ, իսկ ֆիլտրատը աղազրկվել է ինափոխանակային սորբիցիայի և դետրոցիայի եղանակով: Նպատակային ամինաթթուն բյուրեղացվել է երանով 50% ջրային լուծույթից:

Սուսացվել է նոր ոչ սպիտակուցային հետերոցիլիկ տեղակալված  $\alpha$ -ամինաթթու՝ (S)-β-(6-ամին-1,3-դիմեթիլ-2,4-դիօքս-1,2,3,4-տետրահիդրոպիրիդին-5-իլ)- $\alpha$ -ալանին (90), 40% քիմիական ելքով և 97,4% էնանտիոմերային մաքրությամբ:

Նոյն մերուրով (R)-ալրոլինի հենքի վրա կառուցված Ni<sup>II</sup>-(R)-2-CBPB-Δ-Ala (91) կոմպլեքսի կիրառմամբ մինթեզվել է (R)-β-(6-ամին-1,3-դիմեթիլ-2,4-դիօքս-1,2,3,4-տետրահիդրոպիրիդին-5-իլ)- $\alpha$ -ալանին (92) հետերոցիլիկ տեղակալված ոչ սպիտակուցային  $\alpha$ -ամինաթթուն մինչև 97 % էնանտիոմերային մաքրությամբ:


Սիմբեզված 90 և 92 ամինաթթուները ներկայում հետազոտվում են ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի մետաբոլիզմի ինժեներային լաբորատորիայում:

**5. (2*S*,3*S*)- и (2*R*,3*R*)- $\beta$ -[3-(թիոֆեն-2-իլ)-4-ալիլ-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- $\alpha$ -ամինակարագարբիլ սախմետրիկ սինթեզ:**

